[238531]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«01» հունվարի 2017թ. N 80-Ա/1

«ՀԱՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ ՔՈՖՈԵԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 16-ի N 30-Ա/1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացությունը՝ «Հանս Քրիստիան Քոֆոեդ» բարեգործական հիմնադրամի կողմից 2017 թվականի ապրիլի 7-ին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված հայտին կից փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հավաստագրել «Հանս Քրիստիան Քոֆոեդ» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության

2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության՝ որպես ժամանակավոր օթևան կացարանով ապահովելը՝ որոշակի բնակության վայր չունեցող անձանց:

2. Հանձնաժողովին՝ ապահովել սույն հրամանը եռօրյա ժամկետում Հիմնադրամին առձեռն հանձնելը կամ փոստային կապի միջոցով Հիմնադրամին տրամադրած (նշած) գտնվելու վայր ուղարկելը:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ